

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՍՏ ԳԱ քվրակից-անդամ է. Բ. ԱՂԱՅԱՆ

1. ՄԱԹԻՆ /ՄԱԹ, ՄԱՅՐ/ ՄԱՐ, ՄԱՐԵԼ, ՄԱՐԱՅԼ

Այս բառերից առաջին երկուսը հին մատենագրության մեջ գործածվել են՝ սուղորաբար կայուն բառակապակցությունների կամ բաղադրյալ բառերի մեջ, ինչպես՝ ի մառն մտանել, ի մառն դառնալ «մայր մտնել (արևի)»... մառնա- մուտ «մառախուղով պատված, մառախուղի մեջ մտած»։ Առանձին կա գործածված մառն Ստ. Լեհացու բառարանում (ըստ ՆՀԲ). «Ծածկեցաւ մառամբ քաղաքն ամենայն»։ Թե՛ ՆՀԲ և թե՛ Աճառյանի «Արմատականում» բառս բացատրված է «մեզ, մշուշ» իմաստներով, ըստ որում երկուսի համար էլ որպես ելակետ են ծառայում մառախուղ/մառախուլ, մառախալալաւ և նման բառերը։ Բերված կապակցությունները, ինչպես և Լեհացու վկայությունը, ցույց տալիս, որ բառի իմաստն է «մութ, մթություն»։ միայն այդ իմաստի հիման վրա կարող էին առաջանալ ի մառն դառնալ՝ մտանել կապակցությունները, որոնք, բնականաբար, չեն նշանակում «մեզի՝ մշուշի մեջ մտնել», այլ՝ «մայր մտնել»։ Ժամանակակից հայերենում էլ մառ բառը գործածվում է «մութ, մթամած» և փոխաբերաբար՝ «մռայլ, խոժոռ» նշանակությամբ։ Այդ «մութ, մթություն» իմաստը հաստատվում է նաև մայր նույնանիշ բառով, որով ունենք նույնիմաստ կապակցություններ՝ ի մայր մտանել, ի մայր դառնալ «(արևի) մայր մտնել», ի մայր դարձուցանել «հանգցնել, մարել», այլև բաղադրյալ բառեր, ինչպես՝ մայր արևու, արևամայր և արևարե «արևի մայր մտնելը, մայրամուտ, արեամուտ», մարիլ «(աստղի) մայր մտնել» և մարել «հանգցնել, հանգչել», անմար «անշնչ», հատկապես՝ մայրամած «մթամած, խալարամած» և այլն, և այլն։ Այս երկրորդ շարքի բառերի մեջ հանդես են գալիս արմատի երկու տարբերակներ՝ մայր և մար, որոնց նույնությունը կասկածի տեղիք չի տալիս (հմմտ. ալլ/աղ-աւ-աղ-ել, նշոյլ/նշող, քոյլ/քող, ալր/ար- և այլն)։ Այս բառերի հետ է նույնանում նաև մռայլ բառի արմատը, որ է մուռ կամ միռ, իսկ -ալլ-ը ածանց է։

Այսպիսով մառն/մառ, մայր/մար և մուռ կամ միռ (մռայլ) արմատները միանում են իրար թե՛ ձևով և թե՛ «մթություն, մթամած, մթադույն» ընդհանուր իմաստով։ Այս բառերի կապը նշել է դեռևս Ս. Տերվիշյանը, դրանց միացնելով նաև մուր, մրուր բառերը, բխեցնելով դրանք հնիւ. mar «մարել, սեանալ» արմատից և համեմատելով սանս. mal-ina, «մութ», հուն. μαλα- «սե» բառերի հետ։ Աճառյանը բացառում է վերջին երկուսը (մուր, մրուր) և իրար հետ կապում միայն առաջինները, բայց և մերժում է ինչպես Տերվիշյանի, այնպես էլ մառն և մռայլ բառերի այն ստուգաբանությունը, որ առաջարկում է Պետերսոնը, և ընդունում են Վալդեն և Պոկորնին։ Վերջին անգամ այս բառերին անդրադառնում է Պոկորնին¹ (1. 734), որ նախկինում ընդուն-

¹ Julius Pokorny, Indogermanisches Etymologisches Wörterbuch, Bern und München, 1. 1959 (տեքստում հիշվում ենք Պոկ. համադրադրությունը)։

ված հնիւ. մեկ (mer-), mor- արմատը տարբերակելով վերածում է երեքի և հրրորդ (mer-), mor-(u) ձևից բխեցնում հայերեն մառ (մառախուղ) և մալլ բառերը: Նախալեզվյան (mer-), mor-(u) արմատի իմաստն է «սեպնել. մոլթ գույն, կեղտի բիծ»: Դրանից են ծագում հուն. *μερῦρος* «մթին, անթափանց», *μερῦρος/μερῦρος* «ծխապուշ սևացած», լիտ. *morai* «փառ, բորբոս», ռուս. *маратъ* «կեղտոտել», *марашка* «մրարիծ, կեղտի բիծ», չեխ. *moraty* «սևացրած, սևացած», հուն. *μερῦρος* «կեղտապուշ», *μερῦρος* «սև» և այլն: Իրար հետ կապելով հիշյալ հայերեն արմատները, հնարավոր է գտնում հաստատել Պեակոսոնի և Պակոսոն ստադարանությունը, ըստ որում մառ/մառն ծագում է արմատի *merso-* ձևից, մար-ը՝ *mer-* ձևից, մայր-ը՝ *meir-* ձևից և մառ կամ միռ-ը (մա-ալլ)՝ *mers-* ձևից:

2. Ա Մ Ո Ւ

Բառիս արմատն է ու իսկ ամ- ածանց է (հմմտ. ամ-ուսին, ամ-ործիք և այլն): Արմատը ծագում է հնիւ. *el-* (*elei-*, *lei*), *ol-* (*ōlen*, *olen*) արմատից, որի նախնական իմաստն է «արմունկ, արմնկոսկր»: Ցեղակից լեզուների մեջ բառը, բացի արմունկից, գործածվել է նաև մարմնի տարբեր մասերի համար, ստանալով նորանոր իմաստներ և նմանություններ անցել նաև զանազան գործիքների: Այդ արմատից են ծագել նաև հայերեն ուն «վիղ», ողն «ող-», նաև՝ թիկունք», իլ, իլիկ, ոլոխ: Ու-ը ծագում է արմատի պարզական ձևից՝ «ուս, բազուկ» նշանակությամբ և ամ- նախածանցով նշանակել է նախապես «ուսակից, բազկակից, զույգ»:

3. Ա Ն Ղ Ո Ւ Ն

Այս բառը Պակոսոնի կապում է հուն. *γειονοι* «շրթուք, ծնոտ», հին իսլ. *giolnorr* «ծնոտ», շվեդ. *gai*, գան. *gioelle* «ծնոտ, խոփկ» բառերի հետ և ծագած համարում հնիւ. *gheluna* «ծնոտ» բառից: Այս ստուգաբանությունն բնորոշելի է և՛ իմաստաբանորեն, և՛ հնչյունաբանորեն. հայերեն ձեղուն նշանակում է «ծածկ, առաստաղ, առիք». «քիմք» իմաստով գործածվել է վերին ձեղունի բերանի կապակցությամբ, ուստի և հաղիվ թե հնարավոր լինեք այս իմաստը նախնական համարել. հնչյունաբանորեն համեմատությունը ճիշտ է, որովհետև հնիւ. *gheluna* պետք է տար հայերեն ջելուն կամ, գուցե, զեղուն. վերջապես, եթե այդ բոլորն էլ անտես առնենք, դարձյալ այդ ստուգաբանությունն ընդունելի չի լինի, որովհետև ձեղուն բառի ձեղուան, ձեղուանց հոլովածների ծագման բացատրությունը չի տալիս:

Ձեղուն բառի մասին գրել է Հ. Աճառյանը², բացատրելով բառի կազմությունը և կապել վրաց. *jeli* «գերան» բառի հետ: Աճառյանը միանգամայն ճիշտ կերպով ցույց է տալիս, որ բառը կազմված է -ուն <omn մասնիկով, ըստ որում հնիւ. *mn-* ու-ից հետո դառնում է *u* և ընկնում. նա համեմատում է անուն (<հնիւ. (*a*)noion), սրուն և այլ բառերի հետ, որոնք նույնպես ունեն անուան, սրուան ձևով սեռական: Աճառյանի այդ օրինակներին պետք է ավել-լացնել հատկապես մրջիմն, մրջիմն բառը, որի առաջին ձևը կազմված է նույն

² Հ. Աճառյան, Հայկական, Լ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, № 12, 87—88:

ածանցի լուծակերպով՝ -օրոն տարբերակով (մրջի-ման > մրջիմն, մրր-ջիուն > մրջիւն)։ յեւի անունում համապատասխանորեն ունենք մրջման (*մրր-ջիման) և մրջեան (*մրջի-ան), ինչպես արիւն-արեան, սիւն-սեան և այլն։ Նշելով հայերեն ձևում և վրաց. jeli բառերի կապը, Աճառյանը պնդում է, որ հարցը վճռականորեն լուծել հնարավոր չէ, բայց որում հայերեն ձևում բառի ձևը «արմատը գտնվում է միայն վրացերենում և չկա ցեղակից լեզուների մեջ»։ Իրիվ պատկեր կկազմվի կովկասյան լեզուների համեմատական բերականություն ունենալով»։

Առաջին անգամ այս բառի ձևը արմատը կապեց հայերեն ձող բառի հետ Պ. Բեդերյանը³, որը հիմք ընդունելով ձող բառի ստուգաբանությունը, ձևում բառն էլ կապեց հնիս. ց'hel արմատի հետ։ Բեդերյանի հոգովածում, սակայն, նկատի չեն առնվում կովկասյան լեզուներում եղած բառերը (գոնե վրաց. jeli), ինչպես և ճիշտ չի բացատրվում բառի կազմությունը։ Նրա կարծիքով «ձևը բառը ներկայացնում է ձող արմատի հոգն. ուղղական ձևը»։

Ի նպաստ բառի կազմության Հ. Աճառյանի բացատրություն կարելի է հիշել, բացի վերն ասվածներից, նաև հետևյալը։ ձևում բառի գործիականի ձևը դուրսը սովորական ձևի հետ ունենք ձևում ձևը Անանիա Սանահնեցու մոտ. այդ ձևը ցույց է տալիս -օրոն մասնիկը, ճիշտ ինչպես որ ունենք պաշտուն՝ կազմված ուն <օրոն ածանցով (պաշտուն > պաշտուն), սեռ. պաշտաման։

Ի նպաստ ձևը- և ձող արմատների կապի, կարելի է հիշել ձողում «առաստաղ, կտուր», որ Աճառյանը համարում է նույն ձևում բառը՝ բերելով նաև «Վարք (վկայաբանություն) Ս. Գևորգյանի» գրքի ձևագրական ձևում և ձողում տարբերակները, ինչպես և՛ Ակնի բարբառի ձողում, Տր. ցլիսին բառերը՝ նույն նշ։

Այսպիսով, Պ. Բեդերյանի ստուգաբանությունը հաստատվում է և ձևում բառը հայերեն ձող բառի հետ կապվում է հնիս. ց'hel արմատին։

Ինչ վերաբերում է վրաց. jeli բառին, ապա դա լայնորեն տարածված է կովկասյան լեզուներում, և կովկասագետները համարում են բուն կովկասյան բառ։ Վ. Ի. Արանել օտերեն ænjalm/ængalæ «ձողան (жердь), գերան (брус)» բառն ստուգաբանորեն կապում է վրաց. jeli «գերան (брус), սեղ. jali «ծառ», ձան. ja:jalepe, nja:njalepe «նույն նշ.», չեչեն. jolum «գետինը կառնած ծառ՝ ճյուղեր՝ խոփ (валежник)», բալկ. zalmə, zəlmə «ծածկի գերանների վրա փռվող ձյուղեր՝ խոփ» բառերի հետ և համարում կովկասյան փոխառություն։

Թվում է, թե հնիս. ց'hel արմատի ձայնդարձի արտացոլումը ձող և ձևը արմատների ո/և ձայնավորներով, ինչպես և ձևում բառի հայերենով միայն բացատրվող հոլովումը բավականաչափ հիմք են տալիս ձևում բառը բնիկ հայկական համարելու։ Ինչ վերաբերում է այդ բառի և հիշված կովկասյան բառերի կապին, ապա դա կա՛մ պետք է համարել փոխառություն հայերենից, կա՛մ պետք է դիտել որպես պատահական զուգահեռություն։ Անշուշտ, այդ հարցը վճռելը կովկասագետներին է պատկանում, սակայն մեր կողմից կուղիներ հիշել հետևյալը. ինչպես հայտնի է, հնագույն շրջանում վրացերենի

3 Պ. Բեդերյան, Հայերենի մի բառի բառերի ստուգաբանության շուրջը, ՀՍՀՄ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, N 9, էջ 103։

ձ. ծ. ց. բաղաձայններին մեղրելներենում և ճաներենում համապատասխանում են ջ, և, չ բաղաձայնները. օր. յԵՐԻ «արմատ», մեղբ. յԻՈՅԻ «նույն նշ.», վրաց. ԵԵՐԻ ծերի «ձանձ», լադ. ուՇԱՅԻ մծաջի «նույն նշ.», վրաց. ԿԱ ցա «երկինք», լադ. ԿԱ չա «նույն նշ.» և այլն: Եթե վրացերենում և կովկասյան լեզուներում ձևի և համապատասխան բառերի մեջ վրաց. ձ և մյուս լեզուների ձ համապատասխանությունը որևէ այլ հնչյունաբանական բացատրություն ու հիմնավորում չունի, ապա հայերենից փոխառություն համարելը վերացնում է այդ հարցը: Այնուամենայնիվ, այս մասին մենք որոշակի ոչինչ ասել չենք կարող և խնդրի լուծումը թողնում ենք վրացագետներին:

4. ԱՆՈՒՐ, ԱՆԴՐՈՒՐ

Անուր բառն ավանդված է դասական շրջանի մատենագրությամբ և գործածական է մինչև այժմ էլ: ՆՇԲ բացատրության մեջ գրում է. «Մանեակ կամ օղ փայտէ և յերկաթոյ՝ ի նուաճել զպարանոց մարդոյ կամ անասնոյ, որպէս և անցուցեալն ի քիթս և գործի տանջանաց»: Այս բացատրությունը, որ հաստատվում է բերված բազմաթիվ վկայություններով, ցույց է տալիս, որ անուր սովորական օղ չէր, այլ վզին (կամ անասունների դնչին) ազուցվող ծանր փայտե կամ երկաթե օղակ: Ահա հնագույն գործածություններից մի քանիսը. Անուրս փայտեղէնս խորտակեցեր, և արարից ընդ այնր անուրս երկաթիս: Ղիցէ զանուր երկաթոյ ի պարանոցի քում: Լուծ անրոյ նորա յաջողեսցի (բուրն էլ՝ ՍԳՐ): Ինչպես կարելի է հեշտությամբ հասկանալ, այս նախադասությունների մեջ անուր-ը ռուսերեն ХОМУТ-ի իմաստն ունի, այսինքն՝ հենց այսօրվա անուր-ի նշանակությունը:

Բառս ծագում է հնիս. oid արմատի i-n-dro/ endro ձևից. արմատի նախնական իմաստն է «ուռչել», որից ստացվել են «ուռուցք, պալար», ապա և ուռուցիկ ձև ունեցող առարկաների, մարմնի մասերի ևն անուններ: Այսպես՝ արմատի պարզ՝ oid ձևից են ստացվել հայերեն այլո, այլանոլ «ուռչել», որին համապատասխանում են (ըստ ձևի) հուն. οἰδ-σπορευω, οἰδω αἰσθησις ուռչելը, ալիք, ալեծփանք, ծով», հին բարձր գերմ. eiz «պալար», նորվեգ. eitel «բողբոջ, աչք (բույսի), հանգույց, դեղձ», հին եկեղեցասլավոններեն isto (<*id-s-to) «ամորձիք, երիկամ» և այլն: Իր ձևով հայերեն անուր-ը ծագում է արմատի Զndoro աճած տարբերակից. մեր բառի նախնական ձևն է եղել *անդուր (սեռականը՝ անգրոյ), սակայն նոր բաղաձայնների կուտակման պատճառով դ-ն բնկել է: Համենայն դեպս, հին ձևագրերում ունենք նաև անդուր գրչությունը. որ Աճառյանը բացատրում է դ-ի սովորական հավելումով (ինչպես ծանր > ծանդր, սանր > սանդր և այլն), բայց չի բացատրում, որ դա որևէ վայրում պահպանված ավելի հնագույն ձև լինի: Համենայն դեպս, այս ենթադրության օգտին է խոսում անդուր բառը, որի մասին կխոսվի ստորև:

Անդրադառնալով «ուռչել, ուռուցիկ կորածեօղ» իմաստային զարգացմանը, պետք է նկատի ունենալ հետևյալը. շատ լեզուներում անիվ, շրջանակ, օղ և նման բառերը ծագում են «կորություն, ճկել, ուռուցիկություն» բնիմաստով բառերից: Հեռուն չգնալու համար կարող ենք հիշել հենց մեր օղ (աղ) բառը, որ ծագում է հնիս. ȡuio արմատից, որի իմաստն է «կլոր խողովակ, երկարավուն փոս՝ խողոշ՝ զոգավորություն»: Իմաստի տեսակետից մեր անուր բառի հետ համեմատելի են նույն արմատից ծագած ռուս. ԳՂԾՕ «կորիզ, մի-

ջուկ», նորմիզ. eitel «հանգույց, բողբոջ», ինչպես և՛ հին հնդկերեն indriyani «ուժ, կարողություն, զորություն», լիտվերեն idra «ծառի փտած բուն կամ բնի միջի խողովակաձև խոռոչ (փտելուց դույացած)» և այլն: Ձևի տեսակետից համեմատելի են հին հնդկերեն indra «ուժեղ», ավեստերեն Indra, հին հնդկերեն indriyam «ուժ, կարողություն», միտանի Indar «նույն նշ.», սլավոնական *jendro, *jędro, «արագ» և այլն⁴:

Այսպիսով, անուր (անդուր) նախապես նշանակել է «կորացրած՝ ձկած՝ ուռուցիկ դարձրած փայտ կամ մետաղ՝ վզին հագցնելու համար», որից և՛ անուր-ի «վզին հագցնելու օղ» իմաստը:

Նույն արմատից է նաև անդրուար բառը, որ բաղկացած է անդր (<անդուր) և վար- (վարել «տանել, կրել») արմատներից. այս բառը նշանակում է «կառքի կամ պատգաւակի լծված ձի, ջորի. կառք. սայլա: Բնականաբար, նախնական իմաստն է «անուրը կրող», այսինքն՝ լծկան: Վար բառի վերած-վելը ուար-ի կանոնավոր երևույթ է հին հայերենի համար, ըստ որում վա. վո կապակցությունները երկբարբառային դիրքում դառնում են ուա (հմմտ. անի > անուակ, թի > թուոյ և այլն):

5. Ա Շ Խ Ո Յ Ժ

Բառի ձևը ցույց է տալիս, որ իրանական փոխառություն է, ըստ որում հայերենի աշխ-ով սկսվող բոլոր ստուգաբանված բառերն իրանական ծագում ունեն (հմմտ. աշխարհ, աշխէտ, աշխատել և այլն): Մյուս կողմից՝ ոյժ (-ույժ) մասը հայտնապես կապվում է ոյժ (ույժ, ուժ) բառին, որ նույնպես իրանական է: Այսպիսով, պետք է ընդունենք, որ բառը բարդ է և կազմված է աշխ-ի իրանական xša- և ոյժ < իրանական aōja, aōga բառերից. իմաստի և կազմության համար միանգամայն համապատասխան է առոյգ բառին, որ նշանակում է «կալտառ. առողջ, առողջությունն ու ուժերը տեղը» և կազմված է առ-նախածանցով՝ ոյգ < հին պրսկ. aōga «ուժ» բառից: Աշխոյժ բառը հին մատենագրության մեջ գործածվել է «ուժեղ, զորեղ, արի, կտրիճ» նշանակությամբ, իսկ այժմ ունի «զվարթ , կալտառ, հոանդուն» իմաստը: Բառի առաջին բաղադրիչը (աշխ-) Ավեստայի xša(y) «կառողանալ» բայի արմատն է. այդ բայը, բացի կարողանալ ընդհանուր իմաստից, ունեցել է նաև «տիրել, իշխել, ի վիճակի լինել. թագավորել» նշանակությունները: Ըստ այսմ, xša-oja: նշանակել է «ուժ ունեցող, զորեղ, հզոր», որ մեր աշխոյժ բառի իմաստն է:

6. Ն Ո Ի Ա Ճ-Ե Լ

Իրանական փոխառություն է, որ ծագում է vačah բառից՝ ու-«ցած, ստոր, բնդ, ենթ» մասնիկով: Իրանական այդ բառը, որ ծագում է vak «ասել, խոսել» արմատից, ունի «1. խոսք, ճառ, բառ. 2. արտահայտություն, դատողություն. 3. խոստում, ապահովություն, բանավոր երաշխիք» նշանակությունները⁵: Ըստ այսմ, ու+vačah պետք է նախապես նշանակած լինի «խոսքի տակ զցել. իր խոսքին Լնթարկել, ապահովություն՝ երաշխիք առնել», որից ինքնին արդեն բխում է «հնազանդեցնել, հաղթել, տիրել»: Ձևի համար (ու—vačah <

⁴ Արմատի բոլոր ձևերը և ցեղակից լեզուների համապատասխանությունները տե՛ս Գոկ., 77 է:

⁵ Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, էջ 351—353:

⁶ Նույն տեղում, էջ 1340—1342:

1291) անփոփոխ կերպով բերում է այդ բացատրությունը՝ ավելացնելով «օ- յիկ օղիկ դալ» և դուրս գցելով «պաղատիլ, հալիլ, մաշիլ» բառերը: Բառի նախնական իմաստն է «ողբալ, բարձրաձայն լալ», որ պարզ կերպով երևում է ՆՀԲ-ի բերած օրինակներից, ինչպես և կողկողաձայն, կողկողագին, կողկո- ղալի բառերի իմաստից: Կողկողագին նշանակում է «բարձրաձայն ողբալով, աղաղակելով»։ Կողկողանք՝ «ողբ, բարձրաձայն լաց»։ այս են վկայում «ձայն կողկողանաց», «Խառաշանք՝ կողկողանաց հեծուրեան» և նման կապակցու- թյունները: Ըստ Անանյանի, պարզ արմատից կաղմված բայը՝ զօղալ ձևով, պահպանված է Զեյթունի բարբառում և նշանակում է «վրան լալ, ողբալ»։ Ըստ կաղմության բառս կրկնավոր է, պարզ արմատը՝ կող, ծագում է հն/ս. gal- «կոչել, գոչել, բղավել» արմատից, որից են նաև կիմբ. galw- «կոչել, կանչել», բրետոն. galu «կանչ, գոչյուն», հին հյուսիսային klaka «շաղակրատել, ճրո- վողել», հին հնդկերեն garhali «տրտնջալ, բողբոլել», garha «տրտունջ», «բո- ղոր», ցրոն «մուրացկան, աղերսող», ավեստերեն gərəzaiti «տրտնջում է, ողբում է, կոծում է», օսերեն vārziun «հառաչել, հեծել, ողբալ, վայնասուն բարձրացնել», միջին իռլ. gíam «գոչյուն, անեծք», հին բարձր գերմաներեն klinġan «հնչել», ռուսերեն го.тос «ձայն» և այլն: Հայերեն կող- հնթադրում է արմատի ցոլ- ձևը:

Թերևս նույն արմատից է նաև կաղկանձել բայի առաջին բաղադրիչը. այս բառն Աճառյանը համարում է կրկնավոր (*կանձ-կանձ>կաղկանձ). սակայն, մեր կարծիքով, ճիշտ կլինեն համարել համաբարդ բառ՝ նույնիմաստ կաղ և կանձ արմատներով կաղմված: Այս դեպքում ունենք հն/ս. արմատի ցա! ստո- րին ձայնդարձով ձևը (Պոկ., 350):

Նախկինում մենք հնդեվրոպական այս արմատի հետ ենք կապել Գողթն տեղանունը, որ սակայն պետք է մերժել ինչպես իմաստային բացատրության անհավանականության, այնպես էլ հնչյունական անհամապատասխանության պատճառով, քստ որում հն/ս. ց-ին համապատասխանում է հայերեն կ և ոչ գ.

10. Կ Ա Տ Ի Կ

Կատիկը կոկորդի վերնամասի նուրբ առաձգական կոսիկն է, որ փակում է շնչափողը ուտելու և խմելու ժամանակ. կոչվում է նաև մակկոկորդ (cpi- ցlotlis): Այս բառը մատենագրության մեջ ավանդված է միայն միջին դարե- րից, սակայն շատ կենսունակ է արդի ժողովրդական-խոսակցական լեզվում և բարբառներում. դործածվում է նաև արդի գրական լեզվում: Կաղմված է կալտ- արմատից՝ -իկ մասնիկով. գրված է նաև գրիկ (<*կաիկ) ձևով: Ծագում է հն/ս. ցēu- արմատի ցud/ցəd տարբերակից. երկու տարբերակներից առաջինը տվել է կուտ-իկ, որից միջին հայերենում ունենք գրիկ, իսկ ցəd տարբերա- կից՝ կաա-իկ: Հնդեվրոպական արմատի նախնական նշանակությունն է «ձկնի կորացնել, կամարի ձև տալ», որից ստացվել են՝ 1. աղիք, փորստիք, 2. կո- կորդ, վիզ, 3. դունդ, դնդակ, 4. կլոր անոթ, 5. կորացր սծ՝ ոլորած բան, ոլոր- վածք, 6. անձավ, որչ, դոմ, 7. մեջք, ազդր, դիստ» նշանակո- թյունները: Ըստ իմաստի հայերենի կաաիկ բառի գուգահեռներն են. լատ. guttur «կոկորդ», լիտվ. guza «1. քուջ, կտնառք, 2. խպիպ (30Ճ)», ռուս. гуд «շրթունք», անգլ. (բարբառային) kyti, kite «ստամոքս, փոր», միջին բարձր գերմաներեն kiutel «փոր», նոր բարձր գերմ. (բարբառային) köderl, Goderl «բոխախ

խալիպ», խեթ. ku-u-tar/kullar «ծոծրակ, վիզ, ուս», միջին նիդեռլանդերեն coon «ծնոտ», նիդեռլանդերեն koon «աչտ» և այլն (Պոկ. 393—398):

11. Կ Ա Տ Ա Ր

Բառիս նախնական իմաստն է «զազաթ», որից ստացվել են՝ «ծառի վերին մասը՝ զազաթը. արաղաղի բբուկ. ծայր վերջ, ավարտ», ապա և՝ «գործադրություն» իմաստները: Ծագում է հնիս. նույն geu- արմատի gəð տարբերակից: Իմաստի տեսակետից մեր բառի հետ համեմատելի են. լիտվ. gaūgaras «լեռնազազաթ», միջին բարձր. գերմ. kolel «լեռնազազաթ», հին հյուսիսային լայն «կլորածև ծայր՝ զազաթ՝ կույտ», հոլանդերեն kuil «փետրափունջ. զրլխարկ. թռչունի բբուկ. ծառի կատար», գերմ. (բավարական) koppen «ծառի պսակ», անգլոսաքս. copp «զազաթ. անոթ, զավաթ», միջին գերմ. koppe «թռչունի կատար», koppe, kuppe «կլորածև լեռնազազաթ» և այլն (Պոկ. 393—398):

12. Կ Ո Ւ Տ

է. Լիդենը, որին հետևելով՝ նաև Վալդեն և Պոկոունին, այդ նույն geu արմատից են բխեցնում հայերեն կուռն (կոճակ), կուր. կրուկն/կրունկ, կուր «տաշտ, տաշտակ. նավակ, մակույկ», կրայ/կրեայ/կրիա, կուրի «ակոս», կուրիզ բառերը: Հր. Աճառյանը մերժում է այդ բոլոր բառերի կապը միմյանց հետ և հնիս. geu արմատի հետ. դրա պատճառն այն է, որ այն ժամանակ, երբ նա կազմում էր իր «Արմատական բառարանը», հնդեվրոպական այդ արմատի առաջին հնչյունը համարվում էր ց, իսկ դա հայերենում դառնում է ծ: Աճառյանն այդ արմատից բխած էր համարում միայն հայ. ծուռ բառը, որի ստուգաբանությունը առաջարկել էր Մեյեն: Լիդենն էլ, որ առաջարկել էր վերոհիշյալ բառերի ստուգաբանությունը, դրանք բոլորը կապում էր ծուռ բառի հետ: Հետագայում, սակայն, հնիս. geu արմատը վերածվեց երկուսի՝ gers-, որից է հայ. ծուռ և aeu-, որից Պոկոունին բխեցնում է հիշյալ բառերը: Այդ բառերից, սակայն, ինչպես մենք ցույց ենք տվել⁹, կուռն, կոճակ, կրուկն/կրունկ, ինչպես և կուր, կեռ, կոռ, ծագում են ոչ թե հնիս. gēu, այլ gēr- արմատից (Պոկ. 385—389): Այսպիսով, մնում են կուր «տաշտ. նավակ», կրեայ/կրայ/ կրիա. կուրի «ակոս» և կուրիզ բառերը: Այս շորսից առաջին երկուսը մենք միանգամայն ընդունելի ենք համարում, ըստ որում ցեղակից լեզուների մեջ geu- արմատից ծաղած և մեր կուր բառի «տաշտ, նավակ» իմաստը հաստատող բաղմաթիվ դուզահուններ կան. արդեն վերն էլ առաջինը, որ geu- արմատի իմաստներից մեկն է «աման, անոթ», ուստի և հարկ չենք համարում այստեղ հիշել ցեղակից լեզուների բաղմաթիվ բառերը: Կրայ/կրեայ/կրիա բառի կազմությունը հայտնի է՝ եայ ածանց է, ուստի և արմատն է կուր. իմաստային տեսակետից Աճառյանը ճիշտ է համարում Լիդենի այն բացատրությունը, թե նախնական կուր. կուր իմաստից է ծագում այդ կենդանու անունը. իբրև դրա ապացույց նա հիշում է իսպաներեն ու պրովանսալ tortuga, ֆրանս. tortue, ըտալ., պորտուգալ. tartaruga «կրիա» բառերը, որոնք ծագում են լատիներեն turtus «ծուռ» բառից (Արմ., Գ. 1468): Ընդունելով այդ բացատրությունը,

է. Բ. Աղայան, Հնդեվրոպական Gēr- արմատը հայերենում, «Լրագրի հասարակական գիտությունների», 1967, N 5, էջ 61—65:

կալիլայցիներն առհասարակ չեն հետևել Մեղրու բարբառում, ինչպես և ամբողջ Մեղրու շրջանում, կրիային կոչում են տաշտակ (այժմ գործածում են նաև կրիա բառը)¹⁰։ սա նույնպես նշանակում է, որ կրիա բառն իր իմաստով անմիջականորեն կապվում է կուր բառի հետ։ Ինչ վերաբերում է կուրի և կուրի բառերին, ապա հիմք չենք դնում մերժելու էիդենի առաջարկած և Վալդերի ու Պոկոնո-կոզմից ընդունված ստուգաբանությունը, քանի որ Աճառյանի առարկությունն ինքնին վերանում է արմատի առաջին հնչյունի արդի բնորոշումով։ Սակայն, եթե ճիշտ է, որ կուրի բառը ծագում է geu- արմատից, ապա անառարկելի է դառնում նաև կուտ «սերմ, հունդ, թռչունների որպես կեր ծառայող հատիկ» բառի ծագումը նույն արմատի gu- տարբերակից։ Այդ տարբերակը բերվում է Պոկոնոնու բառարանում (էջ 393), որի տակ, սակայն, ցեղակից լեզուների բաղմամբիվ բառերի շարքում չկա հայերեն կուտ-ը։ մեր ստուգաբանությունն այդ բաղմամբիվ բառերին ավելացնում է նաև հայերեն կուտ-ը։

13. Կ Ո Ս Տ Ղ

Այս բառը գործածվում է միայն բարբառներում և նշանակում է «ճյուղը կտրելուց հետո ծառի վրա մնացած մասը, ծառի կամ տախտակի վրայի հանգույց կամ երակ, այդ հանգույցը ընկնելուց հետո մնացած ծակը» (Արմ., Գ. 1344)։ Հայագիտության մեջ այն ենթադրությունն է ընդունվել, որ այս բառը առաջացել է ոստ բառից՝ սկզբից կ և վերջից դ հնչյունների հավելումով։ Անշուշտ, լեզվաբանությանը հայտնի են հնչյունների վանազան հավելումներ բառերի մեջ, բայց տվյալ դեպքում չափազանց տարօրինակ է մեկ բառում ներկու հնչյունների տարապայման հավելումը, որը հնչյունաբանական հաստատուն բացատրություն չունի։ Եվ թեև իր ժամանակին մենք էլ ենք ընդունել այդ ենթադրությունը՝ առ ի չգոյ էլ ապացույց, սակայն այժմ գտնում ենք, որ ոստը և կոստը առանձին բառեր են, իրարից բոլորովին անկախ, բայց նույն (կամ մոտավորապես նույն) իմաստներով։ Կոստը բառը ծագում է հնի. gues- / guos- / gus արմատի guoz-do ածած ձևից (Պոկ. 480), որ նշանակում է «ոստ, ճյուղ, շիվ. ճյուղավորում, սաղարթ (Gezweig, Laubwerk). ցեղակից լեզուների դուգահեռներն են՝ տոսկան. gjethe «սաղարթ. ճյուղեր, ոստեր (հվ. նշանակությամբ)», հին բարձր գերմ. quēsta, միջին բարձր գերմ. quēste, koste, kaste, quast «պսակ, ավել. ցողիչ, ջրցանիչ. ճյուղերի փունջ՝ տրցակ», նորվեգ., դան. kuas «փոքրիկ՝ կտրած ճյուղ», ալբան. għethi «տերև», հին շվեդ. kvaster, kaster, շվեդ. quast, նորվեգ., դան. kost «շվեդի՝ ոստերի փունջ», հին սերբ. gvozd «անտառ», հուն. βόστροχος «մազափունջ, խոպուպ», հին հնդկ. gushpita «ճյուղակ (ճյուղերով)», լատ. vespices «խիտ մացառ», միջին

¹⁰ Հմմտ. Կարճեան՝ կուրաշտակ (Հ. Մուրադյան, Կարճեանի բարբառը, 218), որ մեր կարծիքով համարադր բառ է՝ կուր+տաշտակ>կուրաշտակ>կուրաշտակ (Հմմտ. Քանաբեո՝ կեակրիա, որ նույնպես համարադր է՝ կուտ և կուր բառերից), Կաբավարերդ՝ տաշտակ, կուրաշտակ, տրմրլտաշտակ (Վ. Մուրադյան, Կաբավարերդի բարբառը, 136), Շամախիում՝ կուրա. կոտի (Ռ. Բադրամյան, Շամախիի բարբառը, 208), Գուգարքում՝ տաշտէ կոնակ (ըստ Հ. Կոստանյանի բանավոր հաղորդման) և այլն։ «Արմատականի» է հատորում կրեայ բառի մասին Հր. Աճառյանը գրում է հետևյալ լրացումը. «Ծագում է կուր «մակույկ, նավակ» (այսինքն՝ տաշտ) բառից և նշանակում է բուն «տաշտավոր»։ Ճիշտ նույն ձևով են կազմված պրս. 𐭠𐭣𐭥𐭭 lak «տաշտ. 2. կրիա», որ և 𐭠𐭣𐭥𐭭 lakpuut «կրիա» (բառադի «տաշտակահանակ»), լատ. testu-do «կրիա»՝ ծագած testu «պտուկ» բառից, գվո. տաշտիկահանակ, կրիանկուտ «կրիա» (էջ 135)։

նիդերլանդերեն *quispel*, *quespel*, միջին գերմ. *quispel* «փունջ, հովհար» և այլն: Հայերենը ծագում է *quoz-do-ի* լո-ով ածած ձևից և օրինաչափորեն տալիս է կոստղ. *ինչպես* որ *ozdo* արմատն էլ տվել է ոստ (*zd >* հայ. ոս). Բառի այս ստուգաբանությունը հնարավորություն է տալիս բացատրելու նաև դ հնչյունի հավելումը ոստ բառի վերջում: Հայտնի է, որ հմաստով իրար հետ կապված (հոմանիշ, մերձանիշ, հականիշ) կամ իրար հետ հաճախ գործածվող բառերը նմանակության հետեանքով ձևով էլ նմանվում են միմյանց, պահպանելով, բակայն, տարբերակիչ ձևական որևէ հատկանիշ. օրինակ՝ *չած* բառը *բարձր* բառի նմանակությամբ դարձել է *ցածր*, բարբառներում եղ(եղ) բառն ստացել է եղր ձևը՝ եղր-մեղր կամ եղր ու մեղր հարադրության մեջ և այլն: Նույն եղանակով էլ կոստղ բառի նմանակությամբ ոստ-ը դարձել է ոստղ:

14. Կ Ի Ց/Կ Ո Ի Ց

Բառիս իմաստն է՝ «Է. մի բանի մոտ, կողքին, մոտը, իրար մոտ. 2. միասին, 3. հոգն. կից՝ ձևով՝ «անասունի ետևի մասը», որից էլ՝ «ախացի», կուց ձևով՝ «բուռ» (երկու ափերն իրար միացնելով ձևացրած): Հին մատենագրության մեջ գործածվել է նաև «զույգ» իմաստով. այդ նշանակությամբ գործածվում է նաև բարբառներում (իրար կպած զույգ հացի համար). արմատից կազմված բայը (*կցել*) նշանակում է «միացնել, միավորել, հավելել», բարբառներում և ժողովրդական լեզվում՝ նաև կցվել «զուգավորվել» (շների): Ծագում է հնիս. *ger-* արմատից՝ *-sko* մասնիկով (**ger-sko > *ge-sko >* *կից*): Արմատի ընդհանուր նշանակությունն է «միավորել, ի մի բերել, կցել, ամփոփել, հավաքել»: Ցեղակից լեզուների զուգահեռներից առանձնապես հիշելի են հուն. *ἄγχιον* (*ἄγγιον*, *ἄγγισα*) «հավաքում եմ», *ἄγγισα*, *ἄγγισα* «հավաքությամբ, ժողովով», *ἄγγισα* «ձևով, ձևով», լատ. *grex* «երամ, հոտ», լիտ. *gurguly* «խտացում», *gūrguole* «բազմություն, զանգված», լատիշ. *gurstē* «վուշի կապ», հին եկեղեցասլավոնական *grъstь*, ռուս. *роpъстѣ* «բուռ, կուց», լիտ. *greia* «իրար մոտ, կողք-կողքի, կից», լատ. *greminum* «գիրկ, խոփտ», հուն. *γρόνισα* «փակած բուռ, բռնոց» և այլն: Հայերենի հետ ըստ ձևի համեմատելի են հուն. *ἄγγισα* «ձևով, ամ», լատ. *grex* «հոտ, երամ», լատիշ. *gurstē* «վուշի կապ», սլավոնական *grъstь* «բուռ» ձևերը, որոնք ստացվել են *-sti* ածանցով ձևից (**gurt-sti > gursti*). Հայերենի համար պետք է կանխագրել *-sko* ածանցը՝ *կից/կուց* ձևերի ի/ու ձայնավորները ձայնդարձի հետ են կապվում, ըստ որում հնիս. արմատի համար Պոկոռնին կանխագրում է *ger-*, *gor-*, *gur-* և *grein* հիմնաձևերը (Պոկ. 382—383):

15. Գ Ա Ր

Առանձին չգործածվող արմատ է, որ բարդությունների մեջ հանդես է գալիս իբրև երկրորդ բաղադրիչ (այժմ ածանցական դերով)՝ «որևէ ցավով տառապող՝ հիվանդ. հիվանդություն» նշանակությամբ, ինչպես՝ ցավազար, լիցվազար, զլխազար և այլն: Հնում գործածվել է որպես ինքնուրույն բուռ՝ կազմելով ածանցավոր ձևեր, ինչպես և հանդես գալով իբրև բարդության առաջին բաղադրիչ (հմտ. անգար «միգրեն», գարադուրյուն «աղիքների հիվանդություն, փորհարինք», գարելի կամ գարելի «ցավալի», գարիլ «ցավ դրալ. ցավել» և այլն):

Իրանական փոխառություն է. բառն առկա է Ավեստայում՝ *gaða* ձևով՝ «փշացում, վնասվածք, խաթարում. չարիք, աղետ» նշանակությամբ (Բարթ. 158): Ցեղակից է հնդկական *gada-* բառին, որ նշանակում է «հիվանդություն»: Հր. Աճառյանը նախապես համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով *պճլ*. *gar*, *պրսկ.* *gar*, *gar* «բոր, բորոտություն», *բրդ.* *gir*, *բելուջ.* *gar* «բորոտություն», *ղենդ.* *garenu* և *սանս.* *gara-* «մի տեսակ հիվանդություն», նոր *սլով.* *garje* «բորոտություն», *garjav*, *garat* «բորել» բառերի հետ: Արևատական բառարանում (Կ. 81) հիշելով իր այդ ստուգաբանությունը և մերժելով՝ դրում է. «հյ. գար չի կարելի փոխառյալ դնել այս իրանյան ձևերից՝ նշանակության պատճառով. ինչպես որ չի կարելի դնել *ցեղակից*՝ ձևի պատճառով. սպասելի էր նախաձայն *կ* և ոչ *գ*»: Ավեստերեն *gaða-* բառը լիովին համապատասխանում է մեր *գար*-ին թե՛ ձևով և թե՛ իմաստով, ըստ որում իրանական *հ*-ն հայերենում դառնում է *ր* (հմմտ. *nivaeða* > նուէր, **haðazat* > հարադատ, **irapaðak* > հրապարակ և այլն):

16. ԿԱՐՇՆ՝ «ուժ», ԿԱՐՇՆ՝ «անրակ»

Այս բառը, որ առանձին դորժածությամբ հին մատենագրության մեջ չի ավանդվել, հանդես է գալիս բարդությունների և ածանցումների մեջ «ուժ, զորություն» նշանակությամբ (կարշնեղ, կարշնեղություն, կարշապինդ, կաշմբուռն). կարշն, կարշ, կաշն/կաշմ (հաջորդող *ր*-ից առաջ *ն* > մ օրինաչափ փոփոխությամբ) տարբերակներից հնագույնն է և առավել տարածվածը՝ կարշն. ուրից ստացվել են կաշն՝ *ր*-ի անկումով և կարշ՝ *ն*-ի անկումով: Մագում է հնիս. *guer-* արմատի *gu-*-ու > *gu-*-ու ձևից: Ցեղակից լեզուների զուգահեռներից ըստ իմաստի հայերենին մերձավոր են. կիմր. *brɣw* «ուժեղ, ուժեղություն», հուն. *βρυχας* «հզոր, ուժեղ, զորավոր», *βρυχας* «ուժեղ, ամուր», *βρυχας* «բռնություն», հին. իռլ. *briɣ* «ուժ, զորություն, արժեք, հարգ», լատիշ. *grinums* «խստություն, դաժանություն», գերմ. *krieg* «կռիվ» և այլն: Հնիս. *rs* > հայ. *րշ* հնչյունափոխությունը օրինաչափ է:

Հր. Աճառյանը կարշն արմատի տակ բերում է Ստ. Լեհացու բառարանում հիշված կարշն բառը՝ զրկելով. «Առանձին կարշն ձևը տալիս է Բո. Ստեփ. Լեհ. և մեկնում «ծայր բաղկին ի մէջ ոսկերաց թիկան և արմկան»: Սա, անշուշտ, սխալ էնթադրություն է. ավելի ուղիղ կլիներ դնել «ոյժ ջղանց կամ մկանանց» և կամ պարզապես «ջիղ», ինչպես ունին ոմանք» (Արմ. Բ, 1099): Մեր կարծիքով Աճառյանի այն միտքը, թե Ստ. Լեհացու բացատրությունը «պարզ ենթադրություն է», բավականաչափ հիմնավորված չէ. Ստ. Լեհացու բացատրությունն այնքան պարզորոշված է, որ հազիվ թե հնարավոր լինի պարզ ենթադրություն համարել: Եթե նա կարշնեղ բառից առանձնացներ արմատը և լուկ ենթադրությամբ բացատրեր, ապա ավելի հավանական կլիներ ուղղակի բացույց, քիկունե, ուս կամ չիղ բառերով բացատրել. բայց քանի որ նա հատկապես շեշտում է բաղուկի ծայրը՝ թիկունքի և արմունկի ոսկորների միջև, ապա սխալ է մտածել, թե նրան ծանոթ էր այդպիսի մի բառ: Ընդունելով այդ բառն իբրև ինքնուրույն արմատ, որ նախորդ կարշն «ուժ» բառի հետ կապ չունի և սուսկ համանուն է, մենք ծագած ենք համարում հնիս. *guer* արմատի *guoros* / *gu-*-no տարբերակից (Պոկ. 474). արմատի ընդհանուր իմաստն է «կլանել, կուլ տալ. կոկորդ, վիզ, վզի առջևի մասը»: Այս նույն արմատից են ծագում նաև հայերեն *կեր*, *կուր* (կերակուր), *կուկուր* բառերը:

17. ՀԱՐԵՆԻՐ/ՀԱՐԻՐ

Հայերենի թվականների համակարգում հարևար/հարիւր բառը յուրօրինակ բացատրություն է ներկայացնում. այն դնւթում, երբ հայերենի թվականները՝ 1-ից մինչև 10-ը և այնուհետև բոլոր տասնամյուրները հնդեվրոպական ծագում ունեն և ձևորեն ներկայացնում են հնդեվրոպական հաշվական գրությունը, հարևար բառը մինչև այժմ էլ ստուգաբանված չէ և մնում է որպես առեղծված. ավելի մեծ թվերը (հազար, միլիոն, բյուր) փոխառություն են: Հայտնի է, որ հնդեվրոպական միասնության ժամանակ հնդեվրոպացիների մեծագույն թիվը հարյուրն էր՝ kmto. որ կազմված էր dek'm «տասը» բառից՝ -to մասնիկով (dkmto > kmto հազարի համար թեև բրուգմանը կանխադրում է նախալեզվյան gheslo (սանս. sa-hasra) և g'zhli (լատ. mille) ձևերը, բայց այդ ենթադրությունն ընդհանուր ճանաչում չի գտել և կասկածելի է:

Մենք գտնում ենք, որ հայերենի հարևար/հարիւր բառը ծագել է հնիս. ar-արմատից՝ -uro մասնիկով՝ *areuro > հարևար/հարիւր. նախահունչ հ-ի հալեւումը սովորական երևույթ է հայերենի համար, ինչպես հնիս. od > հայ. հոտ, հնիս. omo > հայ. հում և այլն (հնդեվրոպաբաններից շատերը այդ հալեւումը չեն համարում, այլ «կոկորդայիներ» արտացոլում): Հնդեվրոպական ar արմատը ունի «1. միացնել, կապել, կազմել, հարմարեցնել» նշանակությունները, որից ծագել են «1. անել, կատարել, կազմել, 2. հարդարել, 3. կուռ, թե, ձեռք, 4. հաշվել, համրել» ընդհանուր իմաստները: Հայերենի հարևար թվականը կապվում է «հաշիվ, թիվ» իմաստի հետ: Հայտնի է, որ լեզուների մեջ շատ հաճախ տասնյակ-ը, հարյուր-ը և այլ թվականները կապվում են «շատ. հաշիվ, կլոր հաշիվ, ամբողջ թիվ» և նման բառերի հետ: Այսպես՝ «ուզրոֆին» նական լեզուների մեջ տասը բառը նշանակում է «թիվ» ... աֆրիկյան սևսուտո լեզվով 100-ը կոչվում է iegkolo, որ նշանակում է «խոշոր թիվ»... աֆրիկյան ոռնգա լեզվով 100 կոչվում է urama, բայց կան բարբառներ, որ ասում են kulu, որ նշանակում է «մեծ»¹¹: Հայերենում էլ, ուրեմն, հնդեվրոպական հարյուր նշանակող բառի կորստից հետո այդ թիվն անվանել են հաշիվ, թիվ բառով, որ ստացել է հարյուր իմաստը: Մեր բառի համար լավագույն վկայությունն է գերմանական լեզուների հարյուր-ը, որ կազմված է այս նույն ar- արմատից ստացված rad «հաշիվ» բառի բարդությամբ (հին հյուսիս. hund-rad, գերմ. hundert, անգլ. hundred և այլն). այս լեզուներում էլ նախապես hunderl նշանակել է բառացիորեն «հարյուր հաշիվ», որ տրամաբանորեն կարելի է բացատրել իբր «հաշիվը հասավ հարյուրի, հարյուրը լրացավ» ձևով:

Հետաքրքիր հարց է, թե ինչպես է եղել, որ հայերենը կորցրել է հնդեվրոպական 100 նշանակող բառը. մեր կարծիքով այդ առթիվ կարելի է տալ հետևյալ բացատրությունը. հնդեվրոպական k'ntō բառը հայերենում պետք է տար սան (սուն), որը, սակայն, նույնն է տասնամյուրների սան/սուն բաղադրիչի հետ և նշանակում է սասն (հմմտ. երեսուն «երեք տասն», բառասուն «չորս տասն», ինչպես և՛ Բասն և այլն). ո՛հա այս նույնացումն է եղել պատճառը. որ այդ բառը չի պահպանվել և փոխարինվել է «թիվ, հաշիվ» նշանակող բառով:

¹¹ Հ. Աղայան, Լիակատար քերականություն. Երեւոյի լեզվի, Ե., 1953, էջ 238—239:

Հնդեվրոպական ar- արմատից են նաև հայերեն առնել (*արմատը՝ առ*), առն (*դարձ, հարգարել*), առիառ, յառմառ բառերը:

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Член-корр. АН Арм. ССР Э. Б. АГАЯН

(Р е з ю м е)

В статье предлагается этимология следующих армянских слов: *Մառն/մառ, մայր/մար, մարել, մռայլ, ամու, ձեղուն, անուտ, անդրուար, աշխոյժ, նուաճել, ժէտ/ժետ, օժիտ, կողկողիմ, կաղկանձ, կատիկ, կատար, կուտ, կոստղ, կից/կուց, դար, կարշն, հարհւր/հարիւր, ցայլը*: